

փոփոխակաների խմբագրութեան, տպագրութեան և այլ հանգամանքների առթիւ:

Ընթերցողն արդէն գիտէ, որ այս երեք փոփոխականերից և ոչ մինը ես ինքս չեմ գրի առել, այլ ստացել ուրիշներից: Որքան հարագատ են գրի առնուած, այդ ես չեմ կարող ասել:

№ 14-ը, որի գրի առնողն անյայտ է, գրուած է մեծագիր թերթի վրայ 22 երես անընդհատ, ամեն երեսը 38 տողանի, վերևից երկրորդ տողը երկու շատ մօտ զուգահեռական կարմիր գծով. ձեռագրերը մեկ շատ նման է տաճկահայի գրութեան, որքան ծանօթ ենք և անձնական նամակագրութիւնից, մանաւանդ մի քանի ծանօթութեանց լեզուն: Կովկասում վաղուց այդպիսի թուղթ էլ չկայ:

№ 15-ը յայտնի բանահաւաք Ս. Հայկունունն է, իւր իսկ ձեռագրերը 353 էջ փոքրագիր. գլխաւոր հատուածների մանաւանդ վերնագիր ունեցողների և տղերի բաժանմունքը հանդուցեալ բանաքինն է:

№ 16-ը դարձեալ մեծագիր թուղթ էր 38 երես, Մայր Աթոռի գրաշար Յ. Աւչեանինը. և կրճատեցի 24 էջից սկսած առանձին վստահութիւն չունենալով յատկապէս ասողի վրայ, ի նկատի ունենալով նորա հասակն ու կոչումը. մանաւանդ որ ոչ միայն առանձին նորութիւն չունէր համեմատելով ցարդ հրատարակուածների հետ. այլ և շատ նման № 17-ին, որ աւելի լաւ է և տպագրում է:

Բոլոր անատումները և հարկաւոր համարեցի գործածութեան և ցուցմանց դիւրութեան համար. իսկ № 14-ի բոլոր բաժանմունքներն ևս ևս եմ արել: Ծանօթութիւնները № 14-ի հենց առաջին երեսում անծանօթ բանահաւաքինն է, նոյնպէս յետոյ մի քանի ուրիշները, որ նա փակագծերի մէջ էր նշանակել, ևս ստորև ծանօթութեանց մէջ գրի, ոճից շատ անգամ այդ կընկատուի. իսկ ամենամեծ մասը, ինչպէս և № 15-ի բոլոր բառերի բացատրութիւնները իմն են: Այդ բոլորը ևս կատարել եմ Ս. էջմիածնի Գէորգեան ճեմարանի տաճկահայ ծառաների և սաների, յատկապէս Ծարանեան Սպիրիդոն և Գասպարեան Ղազարի օգնութեամբ: Ջանալով որքան հնարաւոր է հաւատարիմ մնալ բնագրերին, ևս 4—5 անգամ ուշի ուշով մենակ և ուրիշների օգնութեամբ սրբագրել եմ: № 14-ի տ և գ, չ և ջ, ե և ի շատ անգամ անհնարին էր որոշել. այստեղ բացի այդ գէպքերից, եթէ յայտնի վրիպակներ չեն բանահաւաքներինը կամ ասողներինը պիտի համարել ինչպէս և № 15-ում. օրինակ հենց № 14 ա. երեսում «սոլորմի» ի մէջ մեծ մասը «խաղար», բայց երկու անգամ «հաղար»: Որոշ տեղերում, յատկապէս № 15-ի Մոկաց բարբառի